ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ (ԱՇՈՏ I, ՍՄԲԱՏ I, ԱՇՈՏ II) ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԹԱԳԸ

ՌԱՖԱՅԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

IX դ. վերջում Բագրատունիների գլխավորած պայքարը անկախության վերականգնման համար տվեց իր արդյունքը. 885թ. խալիֆայությունը ստիպված եղավ ճանաչել Հայաստանի անկախությունը և Բագրատունի ազգապետ Աշոտ իշխանաց իշխանին թագ շնորհեց: Աշոտը, որը մինչ այդ, 862թ. խալիֆայության կողմից ճանաչվել էր արաբական «Արմինիա» փոխարքայության կառավարիչ, թեկուզ արաբ ոստիկանի վերահսկողությամբ, այժմ ճանաչվեց թագավոր, անկախ պետության գլուխ[1]*:*

Աշոտ Բագրատունու թագավորությունը խալիֆայից անմիջապես հետո ճանաչեց Բյուզանդական կայսրությունը. կայսր Վասիլ I-ը նույնպես թագ ուղարկեց Աշոտին: Այդ մասին հաղորդում է XIII դ. պատմիչ Վարդան Արևելցին, քաղելով այդ փաստը, ինչպես կտեսնենք, իր նախորդ մատենագիրներից. «Զնոյն և կայսրն Վասիլ առաքէ (թագ.– Ռ. Մ.) և օրհնէ զթագն տէր Գէորգ յերեքհարիւր երեսուն և վեց թուին»[2]*: Նույն վկայությունն ունի Կիրակոս Գանձակեցին*[3]*:*

Հայ և օտար սլատմաբանասիրության մեջ, չխոսելով մյուս հասարակագիտական գիտությունների մասին, սկսած արդեն Զամչյանից Վարդան Արևելցու (և Կիրակոս Գանձակեցու, բայց գլխավորապես Վարդանի) հաղորդումը հիմք է հանդիսացել հստակ ձևակերպելու հայ պետականության վերականգնման փաստը և նրա միջազգային-իրավական ճանաչումը ժամանակի երկու աշխարհակալ տերությունների կողմից:

Սակայն վերջերս երևան եկավ մի նոր վարկած, որը ժխտում է կայսեր՝ Վասիլ I-ի, նրա հաջորդներ Լևոն VI-ի և Կոստանդին Ծիրանածինի կողմից Բագրատունի թագավորներին թագ շնորհելու փաստը, այն է՝ ժխտվում է Բագրատունյաց (ավելի ճիշտ՝ Հայոց) պետության որպես թագավորության ճանաչումը Բյուզանդիայի կողմից: Այդ նոր վարկածը առաջինը արտահայտեց Կ. Յուզբաշյանը, ապա կրկնեց Հ. Բարթիկյանը: Մասնագիտությամբ լինելով բյուզանդագետներ, նրանք անվերապահորեն ընդունում են բյուզանդագիտության մեջ ամրացած այն տեսությունը, ըստ որի կայսրությունը թագավոր (βασιλευς) ճանաչում էր միայն իր կայսրին, իսկ մյուս պետությունների գլուխները (կառավարիչները) ճանաչվում էին միայն իշխան կամ իշխանաց իշխան: Ելնելով այդ տեսությունից, Կ. Յուզբաշյանն առաջինը «ժխտեց» Վարդան պատմագրի վկա-

---

1 *Թեև Հայաստանը մինչև Աշոտ II-ի հաղթանակները որոշ հարկ էր վճարում խալիֆայությանը:*

2 *Հաւաքումն պատմութեան Վարդանաց վարդապետի. Վենետիկ, 1862, էջ 85–86:*

3 *Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց. Երևան, 1961, էջ 80:*

յության վավերականությունը, համարելով այն «հիշողություն արաբական թագերի ազդեցությամբ»: Սակայն Յուզբաշյանը չի հիմնավորում և չի պարզաբանում այդ «հիշողության» առաջացման իրական նախապայմանները, բավարարվելով հետևյալ հակիրճ հայտարարությամբ. «Անկախ նրանից, թե կայսրը թագ ուղարկեց թե ոչ, Հայաստանում պետականության վերականգնումը կատարվեց կայսեր կամակցությամբ»[4]: Այդ միտքը նա փորձում է հաստատել պատմիչ Ասողիկի մի արտահայտությամբ, որի մասին կխոսվի ստորև: Տարիներ անց, նորից արծարծելով այդ հարցը, նույն հեղինակը կրկնել է այդ տեսակետը արդեն ռուսերեն[5]: Նման մոտեցումն ակնհայտ թյուրիմացություն է, որին կանդրադառնանք սույն հոդվածի հաջորդ էջերում:

Բոլորովին վերջերս նույն վարկածը կրկնեց և ավելի խորացրեց բյուզանդագետ Հ. Բարթիկյանը: Հ. Բարթիկյանը հարցադրում է անում՝ հարցերի հարցը այն է՝ 884–885թթ. որպես ի՞նչ Բյուզանդիան ճանաչեց Շիրակի հայկական պետությունը՝ իշխանությո՞ւն, թե թագավորություն, պետության գլուխ՝ «իշխանաց իշխան» (ἄρχων των ἀρχόντων), թե թագավոր (βασιλευς): Նշելով X – XIII դդ. հայ պատմիչներին, որոնք գրել են թագի մասին, Բարթիկյանն ամփոփում է, որ այդ հարցի լուսաբանման համար միջնադարյան հայ պատմիչներից ամենավազը և արժանահավատը պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցին է: Ո՞վ կարող էր այդ մասին ամենից քաջատեղյակ լինել, քան գեպքերին ժամանակակից և գլխավոր գերակատարներից մեկը՝ կաթողիկոս և պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին[6]: Նա իր մեծարժեք «Պատմության» մեջ մանրամասն գրում է Բագրատունիների թագավորության հռչակման մասին, կանգ առնում նրա միջազգային ճանաչման հարցի վրա. խալիֆան (ալ-Մուտամիդ) «առաքէ Աշոտոյ թագ թագաւորական... և այլ ևս զգեստս թագաւորականս»: Իսկ երբ խոսքը վերաբերում է Բյուզանդիային, պատմիչը գրում է. «Այլ և մեծ կայսրն Յունաց՝ Բարսեղ, ոչ փոքր ինչ պայման խաղաղութեան և նուաճութեան և սիրոյ հաստատէր ընդ արքային մերոյ Աշոտոյ՝ որդի սիրելի զնա անուանելով»: Այս հաղորդումներից Բարթիկյանը եզրակացնում է, որ գա Շիրակի պետության (Sic՝ Շիրակի) պաշտոնական ճանաչման, երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման փաստաթուղթ է, բարեկամության և համագործակցության պայմանագիր («պայման խաղաղութեան և նուաճութեան և սիրոյ»): Այստեղ խոսք չկա պետության գլխին (Աշոտին) թագավոր ճանաչելու մասին, իսկ «որդի սիրելի» սովորական գարձվածք չէ, այն ուներ որոշակի նշանակություն[7]: Կայսրության հասկացությամբ «որդի» էր կոչվում իրենից այս կամ այն չափով կախման մեջ գտնվողը, իսկ քրիստոնյա հավասարազոր

---

4 Կ. Յ ո ւ զ բ ա շ յ ա ն. «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը միջազգային իրավունքի տեսանկյունից.– «Պատմա-բանասիրական հանդես», 1975, №1, էջ 48– 49:

5 К. Ю з б а ш я н. Армянские государства эпохи Багратидов и Византия. IX—XI вв. М., 1988, с. 89.

6 Տե՛ս Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. Բյուզանդիան և հայ պետականությունը X–XIդդ.– «Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, №1, էջ 20:

7 Տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 139–140: Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 20:

պետության ղեկավարը կայսեր եղբայրն էր կամ «հոգեկան որդին»: Այսպես, Մեծ Հայքի Բագրատունի վեհասլետը կայսեր «հոգեկան որդին էր», օրինակ՝ Աշոտ II-ը որոշ ժամանակ Կ. Պոլսում մնալուց հետո «ծառայական խոստմամբ» խնդրում է իրեն ուղարկել հայրենիք: Այդ արտահայտությունը, ըստ Հ. Բարթիկյանի, նշանակում է վասալական կախում[8]:

Հ. Բարթիկյանի առարկությունները հետևանք են պատմիչներ Վարդան Արևելցու և Կիրակոս Դանձակեցու վկայությունների մերժման, մյուս կողմից՝ Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումների շատ թերի և միակողմանի մեկնաբանման: Մի հարցում Բարթիկյանն իրավացի է, որ Հովհ. Դրասխանակերտցին բոլորից քաջատեղյակ էր մեզ հետաքրքրող հարցին: Բայց մյուս կողմից՝ պետք է մատնանշենք, որ Դրասխանակերտցու հաղորդումներում կան շատ կարևոր մանրամասներ, որոնք վրիպել են Բարթիկյանի ուշադրությունից, բայց հենց դրանք են հաստատում մեր պատմագրության մեջ ընդունված դրույթը:

Նախ, Դրասխանակերտցու հաղորդումը կայսր Վասիլի (Բարսեղի) և Աշոտ I-ի դաշինքի մասին Բարթիկյանը մեջբերում է կիսատ, վերջակետ դնելով շարադրանքի մեջտեղում: Այնինչ այդ հատվածի շարունակությունը շատ կարևոր է: Պատմիչի մոտ գրված է. «...որդի սիրելի զնա անուանելով». այստեղ Բարթիկյանը դնում է վերջակետ, բայց վկայության անմիջապես շարունակությունն է. «Եւ հաղորդակից կացուցանելով յամենայն թագաւորութիւնս տէրութեան իւրոյ»[9]: «Հաղորդակից» լինել, նշանակում է «մասնակից լինել», «տեր լինել», տվյալ դեպքում՝ իր տերության թագավորությանը:

Երկրորդ, Դրասխանակերտցին արժեքավոր մանրամասնություններ է հաղորդում Աշոտ II-ի Կ. Պոլիս կատարած ճանապարհորդության մասին:

Այդ մանրամասները շատ հստակ մատնանշում են, թե ինչ կարգավիճակի գործիչ էր հրավիրում կայսրը (ըստ Դրասխանակերտցու՝ Կոստանդին Ծիրանածինը) իր մայրաքաղաք: Ուղևորության ընթացքում կայսերական իշխանությունները Աշոտին արքայական պատիվներ էին մատուցում. «Եւ բաղում հիւրամեծասիրութիւնս և արքայական պատիւս յիջաւանս այնր պողոտայի դտեալ...»: Երբ Աշոտը հասնում է Կ. Պոլիս, այնտեղ նրան ընդունում են «...ոչ իբրև զայլս ոմանս պատուաւորս, այլ իբրև զթագաւորաղուն բողբոջ գրեթէ ընդ իւրով իսկ Կայսր զնա հարթայարմար ցուցանէր և թագաւորական հրահանգաց հանդիսիւ ճոխացուցանէր»: Կայսրը Աշոտին անվանում է «որդի սիրելի», ապա «և զարդարէր զնա ծիրանազգեաց փառօք և երևելի ոսկեհուռն հանդերձիւք և ոսկետտուն վառիւք և կամար ականակապ ընդ մէջ ունէր ոչ միանդամ կամ երկիցս՝ այլ բազում անդամ նոքա զայս արարեալ...»[10]:

Այս հաղորդումից բխում են հետևյալ կարևոր եզրակացությունները՝

---

8 Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 292: Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 27:

9 Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 140:

10 Նույն տեղում, էջ 285:

ա. Աշոտին բյուզանդական իշխանություններն ու կայսրը գիտում էին որպես «զթագաւորական բողբոջ»: «Բողբոջ» բառը նշանակում է ծիլ, զարմ, շառավիղ[11]: «Զթագաւորական բողբոջ» նշանակում է թագավորական տոհմի շառավիղ. օրինակ՝ Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունու մասին (իշխան էր 894–904թթ.) Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «Զայսու ժամանակաւ մեծ իշխանն Արծրունեաց Աշոտ, որ ի բողբոջից բուսոյ Սենեքերիմայ արքայի...»[12]:

Այսպիսով, «զթագաւորական բողբոջ» նշանակում է թագավորական զարմից, տոհմից և այդ է պատճառը, որ բյուզանդական պաշտոնյաներին հրահանգ էր տրված Աշոտ II-ին Կ. Պոլիս ուղևորության ժամանակ մատուցել արքայական պատիվները, իսկ Կ. Պոլսում կայսր Կոստանդինը նրան ընդունում է թագավորական ճոխությամբ, ինչպես ընդունված էր պալատական հանդեսների հրահանգներով:

Կարելի է միայն տարակուսել, որ Հ. Բարթիկյանը և Կ. Յուզբաշյանը պատմիչի հաղորդած այս կարևոր մանրամասները ուշադրության չեն արժանացրել:

բ. Նույն հատվածում Դրասխանակերտցին գրում է, որ կայսրը Աշոտին մատուցում է նվերներ՝ «ծիրանազգեաց փառօք» և «ոսկետտուն վառիւք» և «ոսկե հուրն հանդերձիւք»: Այդ նշանակում է, որ Աշոտին պարգևում էին ոսկեգույն հանդերձանք, «տտուն վառեր»: «Տտուն» (տուտն) բառը նշանակում է ծայր, թև, վերջավորություն, նաև դրոշակ հանդերձի, ծոպ[13]: «Վառ» բառը նշանակում է զինանշան: Ուրեմն Աշոտը արժանացել է ոսկեգույն հանդերձանքի և զինանշան սիմվոլիկայի, իսկ ոսկեգույնը հատուկ էր թագավորներին: Նրան տրվեցին նաև «ծիրանազգեաց փառօք»: «Փառք» նշանակում է նաև ընծայվող պատիվ, մեծարանք, մեծություն, նշան մեծության, զարդ և այլն[14]: Այդ մեծության նշանները, զարդերը և այլն ծիրանի էին, ծիրանագույն («ծիրանազգեաց» նշանակում է ծիրանազարդ, ծիրանազարդ կայսերական պատիվ)[15]: Իսկ ծիրանագույնը (զարդ, զգեստ և ուրիշ պատիվներ) հատուկ էր միայն կայսրերին և թագավորներին:

Այսպիսով, Աշոտ II-ի ճանապարհորդության և կայսերական պալատում հյուրընկալման նկարագրությունը, որը տրված է Հովհաննես Դրասխանակերտցու կողմից, շատ հստակ հաստատում է, որ Աշոտին կայսրը դիտում էր որպես արքայական տան անդամ, արքայազարմ:

գ. Կա ևս մեկ հանգամանք, որը վրիպել է Բարթիկյանի ուշադրությունից: Նա ընդգծված չեշտում է, որ Հովհաննես Դրասխանակերտցին հիշատակում է Աշոտ I-ի արաբ խալիֆայի ուղարկած թագը, իսկ Բար-

---

11 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. 1, Վենետիկ, 1835, էջ 504:

12 Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 190 (այդ օրինակը բերված է նաև «Նոր բառգրքի» վերը նշված էջում): Նաև Արծրունիները ավանդաբար համարվում էին Ասորեստանի թագավոր Սենեքերիմի «որդիները» (Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 20):

13 Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. 1, էջ 892, 894:

14 Նույն տեղում, հ. 2, էջ 935:

15 Նույն տեղում, հ. 1, էջ 1016:

սեղ կայսեր ուղարկած պատիվների մեջ թագ չի հիշատակում: Ուրեմն Վասիլ (Բարսեղ) կայսրը Աշոտին թագ չի ուղարկել:

Բայց դրան հակասում է Վարդան Արևելցու (և Կիրակոս Գանձակեցու) վկայությունը: Ժամանակին Կ. Ցուզբաշյանը «գտել» էր ելքը՝ պարզվում է, որ Վարգան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու հաղորդումները «ուշ շրջանի ենթադրություններ են, որոնք առաջացել են արաբական թագերի հիշողությունների ազդեցությամբ»[16]: Հ. Բարթիկյանը միանգամայն համամիտ է այդ մեկնաբանության և «ճշգրտման» հետ. նա գրում է՝ այդ հարցը «հատուկ և հանգամանորեն ուսումնասիրել է» Կ. Ցուզբաշյանը և միանգամայն իրավացիորեն Վարգանի և Կիրակոսի՝ Աշոտ I-ի բյուզանդական Վասիլ I կայսեր կողմից թագ ուղարկելու մասին տեղեկությունները համարում է «ուշ շրջանի ենթադրություններ, որոնք առաջացել են արաբական թագերի հիշողությունների ազդեցությամբ», թեև վերջերս հրատարակած մենագրության մեջ նա այդքան էլ վստահ չի պնդում այդ միտքը և այդ ակտի դոյությունը չի բացառում[17]: Հ. Բարթիկյանն ավելացնում է, որ Բյուզանդիան Հայոց թագավորներին թագավոր չի ճանաչել և թագավորական թագ չի ուղարկել նաև հետագայում: Դրա ապացույցը, ըստ նրա, ունենք նյութական մշակույթի հուշարձաններում: Աղթամարի տաճարի քանդակների թվում կա նաև Գագիկ Արծրունու քանդակը, նրա գլխին թագ չէ, այլ արաբական չալմա: Սանահնի և Հաղպատի պատերին պահպանվել է Սմբատ II թագավորի քանդակը, նրա գլխին ևս չալմա է: Անիում գտնված Գագիկ I Բագրատունու արձանի գլխին նույնպես արաբական չալմա է: Եթե 908թ. թագավոր հռչակված Գագիկ Արծրունին դեռևս կարող էր խալիֆայությունից կախման մեջ լինել, «ապա ինչպես բացատրենք Գագիկ I Բագրատունու դեպքում, որ թագավոր կոչվեց Բագրատունյաց թագավորության հռչակումից հարյուր և ավելի տարիներ անց, երբ խալիֆայությունից կախման մեջ լինելու մասին այլևս խոսք լինել չի կարող»[18]:

Այս հատվածում Բարթիկյանը բյուզանդական թագի ժխտման թեզը փորձում է հիմնավորել այն փաստով, որ Բագրատունի երկու թագավորները չալմա են կրում, այլ ոչ թե թագ: Դրանից բխեցվում է եզրակացություն՝ ուրեմն կայսրերը թագ չեն շնորհել: Այս տրամաբանությունը ընդունելի չէ՝ Հայոց թագավորները ունեին երեք տեսակի թագ՝ հայկական, արաբական և բյուզանդական (ինչպես ցույց կտանք ստորև): Հայկական թագը Գագիկ Արծրունու գլխին է՝ որպես խալիֆայից ճանաչված Հայոց թագավոր, երբ 908թ. արաբները Արծրունիներին հակադրեցին Բագրատունիներին, ձգտելով թուլացնել Հայաստանը (Գագիկ Արծրունու թագը տե՛ս նկար 1-ում): Հ. Բարթիկյանն այդ թագը թյուրիմացաբար համարել է չալմա: Ինչ վերաբերում է Գագիկ I Բագրատունու և Սմբատ II Բագրատունու չալմաներին, ապա դրանք Հայոց թագավորները հագնում

16 Կ. Ցուզբաշյան. նշվ. աշխ., էջ 48–49: Նույնի՝ Армянские государства эпохи Багратидов..., с. 89.

17 Հ. Բարթիկյան. նշվ. աշխ., էջ 19: Նկատենք, որ Ցուզբաշյանը մենագրության մեջ (տե՛ս ծանոթագր. 13) բոլորովին չի փոխել իր կարծիքը Վասիլ կայսեր թագի վերաբերյալ:

18 Հ. Բարթիկյան. նշվ. աշխ., էջ 23:

էին հանդիսավոր և պաշտոնական արարողությունների ժամանակ: Զալման արաբների թագն էր, և 885թ. Աշոտ I-ին խալիֆայի ուղարկած թագը՝ գա արաբական չալման է: Զալման ընդգծում էր Հայոց թագավորների միջազգային ճանաչումն ու հեղինակությունը: Բացի չալմայից Բագրատունի թագավորները ունեին նաև հայկական թագ:

Հ. Բարթիկյանի թեզը, ըստ որի եթե քանդակներում Բագրատունի թագավորների գլխին չալմա է, ուրեմն Բյուզանդիան թագ չէր տվել նրանց, համոզիչ չէ: Հայոց թագավորները թագեր ստացել էին նաև բյուզանդական կայսրերից:

Այժմ մանրամասն անդրադառնանք այդ հարցին: Նախ, անհրաժեշտ ենք համարում վկայակոչել գրավոր հաղորդումներ: Ժամանակագրական կարգով առաջինն Անանուն պատմագիրն է: IX կամ՝ X դ. Անանունը, որին մի ժամանակ համարում էին Շապուհ Բագրատունի, գրել է պատմություն, որը մեզ է հասել ոչ ամբողջական վիճակով: Մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ Անանունը գրում է. «Եւ մեռաւ Աշոտ Բագրատունի և թագաւորեաց տանն Հայոց Սմբատ, որդի Աշոտոյ... Եւ կապեաց նմա թագ արքայն Հոռոմոց Ռոմանոսն և սիրէր զնա յուժ»[19]: Այս տողերում բառացի վկայված է կայսերական թագը՝ տրված Ամբատ I-ին: Ժամանակին օգտագործել ենք այդ վկայությունը մեր տեսակետը հիմնավորելու համար[20]:

Հ. Բարթիկյանը, Անանունի պատմությունը բոլորովին անհիմն անվանելով «առասպելապատում», դիտողություն է անում, որ մենք չենք նկատել Ռոմանոս կայսրի գահակալման տարիները՝ 920–944թթ., այսինքն Սմբատ I-ի զոհվելուց 7 տարի անց[21]: Ասել կուզե, թե Անանունի վկայությունը և մեր փաստարկումը ընդունելի չեն: Այնինչ Անանունի հաղորդումը շատ արժեքավոր է և չի կարելի այն անտեսել: Պարզապես մենք պետք է ճշտենք Անանունի կողմից չփոթած կայսրերի անունները՝ Ռոմանոսի փոխարեն պետք է լինի Կոստանդին Ծիրանածին (դահակալել է 913–959թթ., 920–944թթ. Ռոմանոսի հետ): Օգտվելով առիթից, կատարում ենք այդ ճշտումը, միաժամանակ հաստատում Անանունի հաղորդման կարևորությունը և վավերականությունը կայսեր թագի վերաբերյալ:

Հաջորդը՝ հանրահայտ պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն է, որի վկայությունը շատ արժեքավոր է քննվող հարցի պարզաբանման համար (Ասողիկը շարադրանքը հասցնում է մինչև 1003թ., բայց փաստորեն X դ. պատմիչ է): Հ. Բարթիկյանի կարծիքով Բյուզանդիան ճանաչելով հայկական պետությունը, այնուհանդերձ չճանաչեց այն որպես թագավորություն, այլ միայն որպես իշխանություն: Այնինչ Ասողիկը գրում է հետևյալը. «Նորոգումն թագաւորութեանս Հայոց ի ձեռն Աշոտոյ Բագրատունւոյ, որ եղև յաւուրս Վասլի Յունաց թագաւորին և կամակցութեամբ նորին յՅԼԴ թուականութեանս հայոց...»: Ամբատի մասին գրում է. «Իսկ զկնի Աշոտոյ՝ յՅԽ թուականին թագաւոր է Ամբատ որդի նորին ամս ԻԴ,

19 Տե՛ս Պատմութիւն Անանուն գրուցագրի, կարծեցեալ Շապուհ Բագրատունի. Երևան, 1971, էջ 159:

20 Տե՛ս Ռ. Մ ա թ և ո ս յ ա ն. Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը. Երևան, 1990, էջ 99:

21 Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 19:

կամակցութեամբ Լևոն թագաւորի Յունաց»[22]: Պատմիչի խոսքերից պարզ երևում է, որ Վասիլ կայսեր «կամակցութեամբ» Աշոտ Բագրատունու օրոք վերականգնվեց Հայոց թագավորությունը, այլ ոչ թե իշխանությունը:

Հարցի լուծմանը դդալիորեն կնպաստեր IX դ. պատմիչ, Հովհաննես Դրասխանակերտցու նախորդ Շապուհ Բագրատունու «Պատմությունը», որը համարվում է կորած: Սակայն դեռևս 1922թ. «Բազմավեպում» հրատարակվել են Շապուհի պատմության երեք պատառիկները, որոնք, ցավոք, մեր պատմաբանների ուշադրությանը չեն արժանացել: Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրատան այս պատառիկները կազմում են մի խումբ և նշված են Մկրտիչ Ավգերյանի կազմած ձեռագրացուցակում: Խումբն ունի երկու վերնագիր. առաջինը «Պատառիկ ի Շապհոյ պատմագրէ», մյուսը «Պատառիկք Շապհոյ պատմութեան»: Պատառիկներից մեկը վերնագրված է «Պատմական հատուածք հանեալ ի ձեռագրաց Կարապետ վարդապետի Շահնազարեանց, որք կարծին գոլ Շապհոյ»: Այս պատառիկի մասին հրատարակիչ Մ. Տայեանը գրում է, որ նրա մի քանի մասերը համընկնում են Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումների հետ բառ առ բառ, երբեմն էլ համառոտված են, մինչդեռ Դրասխանակերտցին նկարագրում է պարադաները: Հրատարակիչն իր հաղորդումը (տեղեկատվությունը) վերնագրել է «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ» և «Ս. Ղազարու դրչադիրները», և տպագրել է առաջին պատառիկը ամբողջությամբ: Նրանում չարադրված են Սմբատ I-ի և Աշոտ II-ի դահակալության անցքերը: Սմբատ I-ի կայսերական թագի մասին այստեղ ասված է. «Ի վերայ այսորիկ բարեբաստութեանց թագաւորն Հռովմայեցւոց Լևոն, որպէս սիրելի որդւոյ, առաքէ թագ և ընծայ թագաւորին մերոյ Ամբատայ»[23]: Այնուհետև, Աշոտ II-ի Կ. Պոլիս կատարած այցի կապակցությամբ ասված է. «Եւ գնացեալ ի Կոստանդնուպոլիս դառնայ ի Հայս թագիւ և իշխանութեամբ և անթիվ ընծայիւք, որպէս որդի մարտիրոսի և սուրբ թագաւորի»[24]: Պատառիկում, իրոք, Աշոտի Կ. Պոլիս կատարած այցը ներկայացվում է շատ սեղմ, այնինչ Հովհաննես Դրասխանակերտցին այն նկարագրում է մանրամասներով:

Շապուհի պատմության այս պատառիկը, ցավոք, մինչ այժմ գիտական շրջանառության մեջ չի գրվել, այնինչ այն Հովհաննես Դրասխանակերտցու աղբյուրներից մեկն է և, մեր կարծիքով, պետք է իր տեղը գրավի մյուս աղբյուրների շարքում, մինչև չգտնվի և չհրատարակվի Շապուհի ամբողջական աշխատությունը:

Քննվող հարցին վերաբերվող հաջորդ սկզբնաղբյուրը Սամվել Անեցու աշխատությունն է: Վարդան պատմագրից մեկ դար առաջ ապրած այս մատենագիրը Աշոտ I-ի վերաբերյալ ունի հետևյալ վկայությունը. «Եւ ապա յաղագս առաւել լաւութեան թագաւորական պսակաւն ճոխա-

22 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 157, 159:

23 «Բազմավեպ», 1922, մարտ, էջ 70:

24 Նույն տեղում, էջ 72:

բար թագաւորեալ թագ կապեալ յերկոցունց թագաւորացն՝ յիսմայէլացւոց և Յունականէն ամս Ե»[25]:

Վերջապես, ունենք XIII դ. հանրահայտ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությունը, իսկ Օրբելյանը լայնորեն օգտվել է իր նախորդների երկերից, այդ թվում և Հովհ. Դրասխանակերտցու պատմությունից: Սա. Օրբելյանը գրում է. «Աշոտ կայր ի փախստի առ կայսրն Յունաց: Որում թագ կապեալ Ռոմանոսի կայսեր՝ յուղարկէ ի Հայս»[26]:

Ահա այն պատմիչները, որոնք գրել են մինչև Վարդանը (բացառությամբ Ստեփանոս Օրբելյանի). նրանք հաստատում են Վարդանի հաղորդումը և նրանց երկերից, անկասկած, օգտվել է Վարդանը:

Վերը բերված սկզբնաղբյուրների տվյալները չեն հաստատում Հ. Բարթիկյանի հարցադրումը, իբր, Բյուզանդիան, ճանաչելով հայկական պետությունը, այդուհանդերձ չճանաչեց այն որպես թագավորական իշխանություն[7]:

Նկ. 1

Նկ. 2

Մեր հոդվածի երկրորդ մասը նվիրված է նույն խնդրի աղբյուրներին՝ ոչ գրավոր, այլ մշակույթի կերպարվեստի և կիրառական արվեստի:

Սմբատ I Բագրատունին միակ Բագրատունի թագավորն է, որի պատկերը որմնանկարով հասել է մեզ: Այդ որմնանկարը կատարված է Աթենի բնակավայրի (Վրաստան) Ափոն եկեղեցու պատին: Որմնանկարը խմբակային նկար է, ուր պատկերված են Սմբատ I-ը, նրա դուստրը և մանուկ թագաժառանգը (Աշոտ II-ն), արխազաց թագավոր Կոստանդինը և նրա որդի՝ թագաժառանգ Գեորգին: Նրանց գլխավերևներում գրված են անունները (բացի Սմբատի գստեր անունից, որը ջնջվել է):

Որմնանկարը մանրազնին ուսումնասիրել է վրաց արվեստագետ Շ. Ամիրանաշվիլին, օգտվելով նաև Դրասխանակերտցու տվյալներից: Դրաս-

25 Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 94:

26 Տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի. Թիֆլիս, 1910, էջ 192:

27 Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 22:

խանակերտցու տվյալներից նա պարզել է, որ 904թ. Սմբատի և Կոստանդինի միջև տեղի է ունեցել գժտություն, բայց շուտով կողմերը հաշտվել են և կնքվել է բարեկամության դաշինք. Սմբատի գուստրը կնության է արվել արիսաղաց թագաժառանգին: Եկեղեցու բեմի արսիգից վերև գրված է 906թ., ելնելով դրանից, Շ. Ամիրանաշվիլին նկարը թվագրում է 904–906թթ.[28]*:*

Որմնանկարի վրա Սմբատ I-ի թագը (նկ. 1) նման չէ հայկական թագին, որը պատկերված է Գագիկ Արծրունու Աղթամարի Ս. Նշան եկեղեցու քանդակում (նկ. 2): Սակայն Սմբատի թագը նման է բյուզանդական կայսրերի թագերին: Համեմատելու համար ներկայացնում ենք կայսրերի պատկերների (խճանկար, գեղանկար, մանրանկար) մի քանի օրինակներ. Լևոն VI (նկ. 3), Ալեքսեյ Կոմնենոս (նկ. 4), Կոստանդին Մոնոմախ (նկ. 5)[29]*:*

Նկ. 3

Նկ. 5

Նկ. 4

Ինչպես երևում է նկարներից, բյուզանդական կայսրերի թագը իր ձևով պարզորոշ տարբերվում է հայկական թագից: Կայսերական և Սմբատ թագավորի թագերի համեմատությունը ակնհայտորեն մատնանշում է դրանց նույնատիպությունը: Չենք կասկածում, և, մեր կարծիքով, կասկածի տեղ չի մնում, որ որմնանկարում Սմբատ I-ը պատկերված է բյուզանդական թագով և բյուզանդական զգեստով: Օտար և հայկական թագերի տարբերությունը հստակ երևում է նաև Կիլիկիայի Լևոն III թագավորի թագերի օրինակով՝ մի դեպքում այն Ֆրիդրիխ Բարբարոսայից ստացած գերմանական թագն է, մյուս դեպքում՝ հայկական[30]*:*

---

28 Ш. А м и р а н а ш в и л и. История грузинской монументальной живописи. Т. 1. Тбилиси, 1957, с. 95, 96, таб. 81, 83. *Խմբակային նեառը տե՛ս նաև Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Հայկական աշխարհիկ բարձրաքանդակը IX–XIVդդ. Երևան, 1976, էջ 43, նկ. 39:*

29 *Նկարները վերցված են հետևյալ հրատարակություններից՝* "Культура Византии, вторая половина VII–XII в. "М., 1989, с. 29, 263. В. Л и х а ч е в а. Искусство Византии IV–XV. М., 1986, с. 104–105.

30 *Տե՛ս Հայկական մանրանկարչություն: Դիմանկար, կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Աստղիկ Գևորգյանը. Երևան, 1982, նկ. 12 և 35:*

Այսպիսով, նյութական մշակույթի նմուշները, Սիոն եկեղեցու որմնանկարը հաստատում են գրավոր աղբյուրների վկայությունները Վասիլ I կայսեր՝ Աշոտ I-ին, Լևոն VI կայսեր՝ Սմբատ I-ին և Կոստանդին Ծիրանածին կայսեր՝ Աշոտ II-ին թագ շնորհելու և դրանով իսկ՝ հայ պետությունը թագավորություն ճանաչելու մասին:

Այս վկայությունները ուղղակիորեն հակասում են Հ. Բարթիկյանի նոր վարկածին, ուստի նա փորձում է հիմնավորել իր մերժողական մոտեցումը. պատմիչ Ասողիկի վերը մեջբերված հաղորդումը, ըստ նրա, սոսկ վկայում է, որ Բյուզանդիան դեմ չէր Հայոց թագավորության վերականգնմանը, դեմ չէր, որ հայերը նրան (Բագրատունի ազգապետին– Ռ. Մ.) թագավոր հորջորջեին, բայց ամենևին չի նշանակում, որ Բյուզանդիան նրանց ճանաչեց βασιλευς «թագավոր» բյուզանդական հասկացությամբ[31]:

Այդ կապակցությամբ, նախ պետք է ասել, որ Բյուզանդիան ճանաչում էր միայն մեկ βασιλευς՝ դա բյուզանդական կայսրն էր՝ որպես ամբողջ քրիստոնյա աշխարհի գլուխ և առաջնորդ: Իսկ առաջնորդը կարող էր լինել մեկը: Մյուս երկրների դահակալները լոկ տեղական թագավորներ էին կամ կառավարիչներ զանազան հորջորջումներով[32]: Ուստի, ոչ միայն Հայաստանի թագավորը βασιλευς չէր, այլ որևէ այլ երկրի թագավորը βασιλευς լինել չէր կարող (ավելացնենք, որ բյուզանդական դոկտրինայով նույնիսկ արաբական խալիֆան βασιλευς չէր):

Մյուս կողմից Հայոց դահակալին ճանաչել իշխանաց իշխանի կարգավիճակով Բյուզանդիայի համար անտրամաբանական էր և հակասում էր նրա քաղաքական շահերին. Բագրատունի ազգապետը իշխանաց իշխան էր արդեն 862–885թթ., խալիֆայությունը 885թ. Հայոց պետությունը ճանաչել էր որպես թագավորություն (ընդ որում դա ոչ թե Շիրակի, այլ Հայոց թագավորություն էր) և նրա գոյությունը արդեն կայացած փաստ էր, կայսրության կողմից այդ պետության ճանաչումը լոկ որպես իշխանություն կլիներ ռազմավարական ու դիվանագիտական կոպիտ սխալ կայսրությանը անհրաժեշտ էր խալիֆայության արևելյան սահմաններում ունենալ հուսալի դաշնակից, որպիսին Հայաստանն էր: Դրանով է բացատրվում Աշոտ II-ին ցույց տրված արտակարգ բարյացակամ ընդունելությունը Կ. Պոլսում, նրան պատիվներ էին տալիս «ոչ իբրև զայլս ոմանս պատուաւորս», այլ իբրև թագավորազուն «բողբոջ», «գրեթէ ընդ իւրով իսկ (կայսեր – Ռ. Մ.)»: Այս խոսքերը վկայում են կայսրության խիստ շահագրգռվածությունը՝ իր կողմը գրավել Հայաստանը. այսպիսի պարագաներում ճանաչել այդ պետությունը այն կարգավիճակով, որը Հայաստանն ուներ արդեն 862–885թթ., պարզապես անիմաստ էր:

Ճիշտ է, Հայոց թագավորը չի ճանաչվել «βασιλευς», բայց դրանով չէր ժխտվում Բագրատունի ազգապետի թագավորական պատիվը: Ընդ որում, Բյուզանդական կայսրությունը թագավոր էր ճանաչում և

---

31 Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 17:

32 И. М е д в е д е в. Империя и суверенитет в средние века.— Проблемы истории международных отношений. Л., 1972, с. 415—419.

թագ էր ուղարկում ոչ միայն Հայաստանի, այլև այլ երկրների գահակալներին: Կան այդ իրողությունը հաստատող փաստեր. բերենք երկու օրինակ. XIդ. Բյուզանդիան երկու անգամ թագ էր ուղարկել Հունգարիայի գահակալներին. Կոստանդին Մոնոմախոսը՝ Անդրեյ I-ին թագադրության առթիվ և Միխայիլ Դուկասը՝ Գեզե I-ին[33] (նշում ենք միայն մեզ հայտնի օրինակները): Բյուզանդիան թագ էր շնորհել նաև Փառիսոսի իշխան Հովհաննես-Սենեքերիմին, որը մինչ այդ թագ էր ստացել Պարսից թագավորից[34]:

Մյուս կողմից զարմացնում է նշված երկու բյուզանդագետների թերահավատությունը Վարդան պատմագրի հաղորդման վերաբերյալ: Վարդան Արևելցու երկը պատմաբանասիրության մեջ համարվում է բարձրարժեք և ամենավստահելի սկզբնաղբյուր: «Հաւաքումն պատմութեանը» գրելիս Վարդանը օգտվել է հայ մատենագիրներից՝ սկսած Մովսես Խորենացուց մինչև Կիրակոս Գանձակեցի, իր նախորդ մատենագիրների երկերի մի մասը օգտագործել է անմիջարար, մյուս մասը՝ միջանկյալ: Անմիջարար օգտագործված են հետևյալ պատմիչների երկերը՝ Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրությունը», Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Հովհան Մամիկոնյանի, Սեբեոսի, Ուխտանեսի, Հովհաննես Դրասխանակերտցու, Ասողիկի, Մաաթեոս Ուռհայեցու երկերը, Միքայել Ասորու «Ժամանակագրությունը», ընդ որում այս երկին առնչվել է ուղղակիորեն, մասնակցել է նրա հայերեն թարգմանությանը կամ հիմնովին խմբագրել է արդեն հայերեն թարգմանված երկը[35]: Լայնորեն օգտվել է նաև Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունից». Փ. Այնթափյանի կարծիքով Վարդանի երկի 104–118 էջերը շարադրված են գերազանցապես Մատթեոսի «Ժամանակագրության» հիման վրա[36]: Միջանկյալ օգտագործված են, օրինակ, Ամվել Անեցու ժամանակագրությունը՝ Կիրակոս Գանձակեցու «Պատմության» միջոցով:

Վարդանը օգտվել է նաև այնպիսի սկզբնաղբյուրներից, որոնք այսօր համարվում են կորած: Փ. Այնթափյանի ուսումնասիրությունից պարզվում են դրանցից մի քանիսը. Վարդանը շատ է օգտվել XIIդ. մատենագիր Մխիթար Անեցուց, Հովհաննես Վանականի երկից (XIIIդ.), Վահրամի (Վահրամ որդի Տիգրանի, XIդ.) երկից, որը դրել է սելջուկների մասին (Վահրամի երկից օգտվել է նաև Մ. Զամչյանը): Միջնորդաբար՝ Մխիթար Անեցու միջոցով օգտվել է Հովհաննես Կոզեռնի «Բագրատունիների պատմությունից»[37] (այս երկը գրել է կաթողիկոս Պետրոս Ա Գետադարձի պատվերով. ամենայն հավանականությամբ, Վասիլ կայսեր թագի մասին տեղեկությունը Վարդանը վերցրել է Կոզեռնի պատմությունից):

---

33 Տե՛ս В. Лихачева. նշվ. աշխ., էջ 192: Տե՛ս նաև «Культура Византии», с. 538; Г. Семар. Среди монет. М., 1990, с. 96.

34 Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Ազուանից աշխարհի. Երևան, 1983, էջ 341:

35 Տե՛ս Փայլակ Այնթափյան. Վարդան Արևելցու «Պատմության» սկզբնաղբյուրները.– «Բանբեր Մատենադարանի», 1984, №14, էջ 99:

36 Նույն տեղում:

37 Փայլակ Այնթափյան. Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» կորած աղբյուրները.– «Սիոն», 1980, Ա–Բ, էջ 24–30:

Բացի այդ, Փ. Այնթափյանը դտնում է, որ Վարդանը միշտ չէ, որ բառացի ընդօրինակում է աղբյուրները, այլ համեմատում է համախոս մի քանի աղբյուրների հետ և լրացնում անմիջական աղբյուրի հաղորդումները[38]:

Վերը բերված փաստերը միանդամայն բավարար են, որպեսզի Վարդան Արևելցու տեղեկությունները IX–XII դդ. պատմական անցքերի վերաբերյալ համարել վստահելի վկայություններ, քանի որ այդ անցքերի պատմությունը շարադրելիս նա օգտվել է IX, X, XI, XII դդ. սկզբնաղբյուրներից, որոնք մեզ առ այսօր հայտնի են միայն Վարդանի պատմության շնորհիվ: Ուրեմն, չի կարելի մերժել Վարդանի վկայությունը Վասիլ կայսեր ուղարկած թագի մասին արհեստականորեն ստեղծված առարկությամբ իբր, «ուշ շրջանի աղբյուր»: Այդ միտքը մենք արտահայտել ենք դեռևս 10 տարի առաջ[39]: Հ. Բարթիկյանը բոլորովին հաշվի չառնելով Փ. Այնթափյանի ուսումնասիրությունը, շատ հեշտ միանում է Կ. Յուզբաշյանի անընդունելի վարկածին և ներկայացնում Վարդանի հաղորդումը բյուզանդական թագի մասին որպես «հիշողություն» արաբական թագերի ազդեցությամբ:

Վերը շարադրած աղբյուրների վկայությունները և մշակույթի տվյալները, մեր կարծիքով, միանդամայն բավարար են մերժելու վերը քննարկված նոր վարկածը կայսրության կողմից 885թ. Հայոց թագավորության ճանաչման վերաբերյալ և հաստատել պատմագիտության մեջ ընդունված ճիշտ տեսակետը:

ВИЗАНТИЙСКАЯ КОРОНА БАГРАТИДСКИХ ЦАРЕЙ (АШОТ I, СМБАТ I, АШОТ II)

РАФАЕЛ МАТЕВОСЯН

Резюме

В 885 г. князь князей Ашот I Багратуни получил корону от Халифа и короновался царем. Историки XIII в. (Вардан Аревелци, Киракос Гандзакеци) сообщают, что император Византии Василий I также прислал корону. Византинист Р. Бартикян (ранее — также и К. Юзбашян) отрицают достоверность сообщения Вардана Аревелци и Киракоса как "воспоминания об арабских коронах" историками более поздней эпохи (т. е. XIII в.). Однако сообщение Вардана Аревелци вполне достоверно — он пользовался сочинениями авторов предшествующих эпох, в которых упоминаются византийские короны первых трех багратидских царей. Кроме того, сравнение фрескового портрета царя Армении Смбата I Багратуни (фреска церкви Сион в Атени, Грузия), с портретами византийских императоров указывает на полное сходство их корон. Вне

38 *Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1984, № 14, էջ 86:*

39 *Տե՛ս Ռ. Մ ա թ ե ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 98:*

сомнения корона Смбата I – византийская, полученная от императора Льва VI. Смбат имел также армянскую корону. Византийскую корону имел и Ашот II.

THE BYZANTINE CROWN OF THE BAGRATID KINGS (ASHOT I, SMBAT I, ASHOT II)

RAFAEL MATEVOSYAN

S u m m a r y

In 885 Ashot I Bagratouny, the prince of princes, received a crown from Caliph and was crowned as the king. The historians of 13th century (Vardan Areveltsi, Kirakos Gandzaketsi) inform that the emperor of Byzantine Vasil I sent a crown as well. A scholar in Byzantine studies H. Bartikyan (earlier – K. Yuzbashyan too) denies the authenticity of informations of Vardan Areveltsi and Kirakos as "the reminiscences about Arabic crowns" by the historians of later epoch (i. e. the 13th century). However, the information of Vardan Areveltsi is rather authentic – he used the works of the authors of previous epochs, where the Byzantine crowns of the first three Bagratid kings were mentioned. Besides, the comparison of fresco portrait of the king of Armenia Smbat I Bagratouny (fresco of Syon church in Atheny, Georgia) with the portraits of Byzantine emperors shows the complete likeness of their crowns. Undoubtedly the crown of Smbat is a Byzantine, received from the emperor Leo VI. Smbat had the Armenian crown as well. King Ashot II also had a Byzantine crown.